

բար լեզուի խնդրում էլ մեծապէս նպաստել է այն պայքարին, որ տասնեակ տարիներ մղուել է աշխարհաբարի յաղթանակի համար ձեմարանում ու ձեմարանի պատերից դուրս ազգային հասարակական կեանքի մէջ:

Այդ պայքարի մէջ ուրախալին ու ողջունելին, ի դէպ, այն է, որ աշխարհաբարի կողմնակիցներն ու պաշտպանները չհետեւեցին գրաբարի պաշտպանների տղեղ օրինակին եւ երբեք ո՛չ նուաստացրին, ո՛չ ուրացան գրաբարի մեծ արժէքը, նրա լեզուական հարստութիւնը, նրա ճկնութիւնը, նրա կանոնադրութիւնը, նրա հմայիչ զեղեցկութիւնն ու քաղցրահնչութիւնը:

Աշխարհաբարի յաղթանակը մի անգամ եւս եկաւ ապացուցելու, որ հասարակական կեանքի բնականոն հոլովոյթի ընթացքը անկարելի է փոխել մարդկանց քմահաճոյքով, որ պատմական յառաջադիմութեան անխընդհանրին է յետ մղել նոյն իսկ ամենաուժեղ անհատների կամքով, որ նա զարգանում է կեանքի մէջ իշխող կոյր ոյժերի անդրդուելի հարկադրանքի ներքոյ:

Ժամանակի մտաւորականութեան իմացականութեան աստիճանից է կախուած ըմբռնել ժամանակի ոգին ու պահանջները. ըմբռնել տուեալ հասարակական հաւաքականութեան պատմական զարգացման ուղին եւ ըստ այնմ գործել:

Աշխարհաբարի պաշտպանները, մասնաւորապէս Լազարեան ձեմարանը պարծանքով կարող են արձանագրել, որ ՅՕական թուականներին Հայոց չքեղ վերածնութեանը ո՛չ միայն անմաս չեն մնացել, այլ եւ բերել են իրենց խոշոր վաստակը:

(Շարունակելի:)

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ՀՅՑ ՄՅԵՎՈՒԹԵՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն:)

ՕՐԹԱԳԻՒՒՂ

1. Ս. ԹԱՐԳՄԱՆՁԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1844)

Օրթագիւղի հնագոյն Ընկերութիւնն է «Ս. Թարգմանչաց Ընկերութիւնը», հիմնուած 1844ի վերջերք: Առաջին յիշատակութիւնը Իզմիրահայ թերթը՝ Արշալոյս Արաբատեան¹ կ'ընէ, գրելով. «Մեր բարեմիտ ընթերցողները գուցէ կարծեն թէ ա՛լ ուրիշ նորահիմն Ընկերութիւն մը չունինք ծանուցանելու. բայց այնպէս չէ, կը սխալին. ինչու որ ուսումնասիրական եւ ընկերական գովելի եռանդ մըն ալ Կոստանդնուպոլսոյ Օրթագիւղը յայտնուեցաւ. եւ այնտեղը բնակող մեծապատիւ հայրենասէր Ամիրայից հաւանութեամբ եւ խորհրդով՝ Ս. Թարգմանչաց Ընկերութիւն անունով միարանութիւն մը հաստատուեալ է, որուն նպատակը՝ նոյն գեղին վարժարանը բարեկարգել է. եւ ինչպէս կը լսենք, հայկաբանութեան եւ գաղղիական լեզուին համար արժանաւոր ուսուցիչներ հաստատելին ի գատ, մէկ երկու օգտակար արհեստից համար ալ վարպետներ կարգելու են, այսինքն՝ դերձակութեան եւ կոշկակարութեան. որպէս զի դարատան աղքատ տղաք օրը մէկ երկու ժամ յիշեալ արուեստից հետեւելով նոյն վարժարանին մէջ՝ անկէց ելլելու ատենը՝ կարող ըլլան իրենց սպրուստը դիւրաւ շահելու ձեռքերին ծառայական պատրաստ արհեստ մը ունենալով»:

Օրթագիւղի «Ս. Թարգմանչաց» դպրոցի ծագումը՝ Շնորհք Ամիրայէն, 1790ին, կը համարուի², բայց կրնայ աւելի հին ալ ըլլալ:

Մասիսի համեմատ³ Ընկերութիւնը 1856 Յունիս 1ին վերակազմուելէ վերջ՝ մեծ հոգ տարած է վարժարանին յառաջդիմութեան:

Մեղք որ անձանօթ կը մնան Ընկերութեան թէ՛ հիմնադիրները, թէ՛ վերակազմողները եւ թէ՛ Կանոնադիրը, որոնք ո՛չ մէկ տեղ յիշուած են:

¹ 1845 թ. 224, Յունուար 13ին:
² Տօթթ. Վահրամ Յ. Թորոսեան, Երեմիա 2է-1է պիտի Ստամբուլոյ Պատմութիւն, Վիեննա 1932, էջ 669:
³ 1857, թ. 280:

2. ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հանրային Ընթերցարանի մը բացումին առաջին գաղափարը, եթէ չենք սխալիր, Օրթագիւղի Հայոց կը պատկանի, որոնք 1847 Դեկտ.ին Ընկերութիւն մը կը հաստատեն «Վերծանութեան Թանգարանի Ընկերութիւն» անունով, որ 1848 Յունուար 1ին բացումը կ'ընէ «Վերծանութեան Թանգարան»ին, այսինքն՝ Ընթերցարանին:

Այս թանկագին տեղեկութիւնները կը պարտինք Իզմիրի հայ թերթին, Արշալոյս Արաբատեանի խմբագիր՝ Ղուկաս Գ. Պալքապետեանի, որ մասնաւոր հոգածութեամբ ետեւէ եղած, հաւաքած եւ օրը օրին հաղորդած է ինչպէս այս՝ նոյնպէս ուրիշ բազմաթիւ հին հայ Ընկերութիւններու ծագման պատմութիւնը:

Արշալոյս Արաբատեան⁴ «Վերծանութեան Թանգարանի Ընկերութեան» հիմնումը յիշելէ վերջ՝ կու տայ Ընկերութեան Կանոնադիրը, ուր հիմնադիրները նախ կը շեշտեն թէ մինչեւ այդ ատեն «Ազգերնու մեծ պակասութիւններէն մէկն է... Վերծանութեան տեղի մը, ուր այլեւայլ դրքեր ժողոված, կարգալ ուզող կարենայ լիովին իր փափաքը լեցնել...: Այս պակասութիւնը՝ հին ատենը մեր ազգին մէջ Դիւաններն ու Գրքատունները կը լեցնէին».
Ետոյ կ'իմացնեն թէ թէեւ հասարակաց Ընթերցարանի մը բացումը «անյաղթելի արգելիքներով խափանուած էր»՝ սակայն «Վերծանութեան Թանգարանի Ընկերութեան» հիմնադիրները յաղթելով ամէն արգելքի՝ անոր բացումը կը կատարեն՝ «Չտարակուսելով ամէն ընթերցասիրաց մէկտեղ աւ բանիս տալու ձեռնառութեամբ վրայ»⁵:

«Թանգարան»ի պետ նշանակուած է՝ յետոյ քահանայ ձեռնադրուած՝ Տէր Սահակ, որ այդ ատեն 20 տարեկան պատանի մ'էր⁶:

Ահա՛ Ընկերութեան «Պայմանք»ը (Կանոնադիր).
«Ա. Միջազգի մէջ հաստատուած Վերծանութեան Թանգարանը սահմանուած տեղի մը ունի, ուր միայն Թանգարանին ընկերները պիտի կարենան մտնալ ու գրոց ընթերցմանը վայելել:

Բ. Ընկերութեան մասնակից ըլլալու համար տարուէ տարի վճարելու կանխիկ տուրքն է 60 դուրուշ մէկ բաժին: Երկու

⁴ 1847, թ. 301:
⁵ Անդ, 1848, թ. 303:
⁶ Նաբ Լուր, Կ. Պ. 1925, թ. 226:

երեք կամ աւելի բաժին վճարողները Ընկերութեան մեծ շնորհ ու պատիւ ըրած կը համարուին:

Գ. Ընկերութիւնը այս բաժիններէն ստացած դրամովը հետզհետէ պիտի գնէ ու գետեղէ Թանգարանին մէջ նախ՝ ամէն հայերէն լեզուով հրատարակած լրագիրները, երկրորդ՝ նախնեաց մատենագրութիւնները, երրորդ՝ նորոց եւ հետզհետէ ելլելու պիտանի գիրքերը, չորրորդ՝ եւ ամէնէն վերջը՝ թէ որ կարող ըլլայ նէ, օտար լեզուներէ կարելոր գրեանք:

Դ. Ընկերութեան ելքն ու մուտը եւ գրոց վճարքը տնօրինելու համար մէկ Տեսուչ եւ երեք անշահասէր ու հաւատարիմ մարդիկ սահմանուած են, որոնցմէ մէկը գիտնական, որպէս զի այն գիտնականը՝ երկու ընկերաց խորհրդովը գնելու գրոց որոշումը ընէ, որոնց մէջ բարուց կամ կրօնից դէմ ամենեւին պիտի չգտնուի:

Ե. Աս պաշտօնատէրները հաստատուն են ու միայն անհաւատարմութեան կամ անկարութեան պատճառաւ կրնան փոխուիլ, որպէս զի շիթութեան առիթ չըլլայ:

Զ. Թանգարանէն գիրք մը դուրս առնել ուզողը (լրագիրները ամենեւին դուրս չեն ելլար) իր ստորագրութեամբը մուրհակ մը կը ձգէ պահապանին, որուն մէջ առած իրին անունը ու թիւը կը յիշատակէ խոստմամբ ետ դարձնելու մէկ ամսուան միջոցի մէջ: Իսկ եթէ գիրքը աղտեղէ կամ կորսնցնէ, կը պարտաւորի նոյն անձը անոր դինը Ընկերութեան վճարելու:

Է. Թանգարանի Ընկերութեան սենեակը ներկայ տարուոյս սկիզբը բացուեցաւ ի Միջազգի: Այս Ընկերութեան ով որ կ'ուզէ կրնայ գրուիլ նախ՝ Միջազգիի դպրաց սենեակը, երկրորդ՝ Իւսկիւտար՝ սուրբ Սաչ եկեղեցին մահտեսի տէր Գրիգորին քով, երրորդ՝ Պալատ սուրբ Հրեշտակապետ եկեղեցին տէր Մաղաքիային քով, չորրորդ՝ Պլոտի նոր խանը կեսարացի Պօղոս աղային սենեակը:

Միջազգի ի 12 յունվարի 1848⁷»:

Ընկերութիւնը քիչ վերջ հարկ կը տեսնէ քանի մը փոփոխութիւն ներմուծել իր եօթը կանոններու մէջ եւ կը կազմէ 9 կանոններ եւս, որոնք հրատարակուած են Արշ. Արաբատեանի կողմէ⁸, որ կը գովէ Ընկերու-

⁷ Արշալոյս Արաբատեան, 1848, թ. 303:
⁸ Անդ, թ. 310:

Թիւնը եւ շատ յուսալից կը գտնէ անոր ապագան:

1852ին արդէն Ընկերութիւնը հաւաքած էր 38 Ձեռագիր եւ 500 տպագիր գիրք⁹, որոնք 1932ին տակաւին կը մնային «Ս. Թարգմանչաց» վարժարանին մէջ¹⁰:

Ընկերութիւնը կրցած է ունենալ յատուկ չէնք մը «Վերծանութեան Թանգարան»ի համար: Այդ չէնքը 1859ին կը յատկացուի Օրթադիւղի նորարաց «Հոփսիսիմեանց» աղջկանց վարժարանին, իսկ «Թանգարան»ը կը փոխադրուի Ս. Թարգմանչաց վարժարանը¹¹:

Մասիս¹² 1861ին կ'ըսէ որ Օրթադիւղի Վերծանութեան Թանգարանի Ընկերութիւնը, որ 1848ին հաստատուած եւ բաւական արդիւնք ցուցուցած է՝ «Ժամանակէ մը ի վեր խափանուած» ըլլալով՝ «Թաղին ուսումնասէր հասարակութեան ջանիւք վերստին պիտի հաստատուի աւելի կանոնաւոր եւ ընդարձակ հիմանց վրայ»:

Սխալ է թերթին ըսածը թէ Ընկերութիւնը 1848ին հաստատուած է: Ընկերութիւնը, ինչպէս գրեցինք վերը, հաստատուած է 1847ի վերջերը, հաւանօրէն Դեկտեմբերին, իսկ «Վերծանութեան Թանգարան»ը (Ընթերցարան) բացուած է 1848 Յունուար 1ին:

Վերծանութեան Թանգարանի Ընկերութեան վերահաստատութիւնը մեծ հանդէսով տեղի ունեցած է 1862 Յունուար 17ին, ուր Տիրբան Եուսուֆեան ճառով մը կը բացատրէ ազգային յոռաջգիծութեան համար Վերծանութեան Թանգարանի կարեւորութիւնն ու օգտակարութիւնը. կը կարդացուի Ընկերութեան Կանոնադրութիւնը. շնորհակալութեան ուղերձ մը կ'ըլլայ Գարրիէլ Սուրբանի, որ մեծազումար նուէրով մը Թանգարանի միակ բարերարն եղած էր: Թանգարանը ունի 750 գիրք, 150 Ձեռագիր, ազգ. բոլոր թերթերը եւ քանի մը օտար թերթեր: Ընկերութեան տարեկան բաժնեկիցարն է 100, իսկ եռամսեան՝ 30 դուրուշ¹³:

1925ին Թանգարանի մէջ «ի պահ կը մնար տպագիր գրքերու հաւաքածոյ մը եւ 180է աւելի արժէքաւոր Ձեռագիրներ¹⁴»:

⁹ Ընդարձակ Օրացոյց Ս. Փ. Ազգ. Հիւ., Կ. Պ. 1901, էջ 248:
¹⁰ Թորգոմեան, անդ՝ Բ., էջ 677:
¹¹ Մասիս, 1859, թ. 385:
¹² 1861, թ. 518:
¹³ Մասիս, 1862, թ. 521:
¹⁴ Նոր Լուր, Կ. Պ. 1925, թ. 226:

Ալլոյոյաճեան¹⁵ Ընկերութեան անունը թերութեամբ «Վերծանութեան Ընկերութիւն» կոչելէ զատ՝ հիմնուած 1846 կը գնէ:

3. ԳՊՐԱՅ ԴԱՍ (1847 ?)

Արշալոյս Արարատեանի մէջ¹⁶ տպուած Վերծանութեան Թանգարանի Ընկերութեան Կանոնադրին մէջ կը յիշատակուի Օրթագիւղի «Դպրաց սեմեակ»ը որմէ կ'իմանանք թէ 1847ին Օրթագիւղ ունէր եւ կամ ասոկէ առաջ ունեցած էր Դպրաց Դասի կազմակերպութիւն մը, որ իր յատուկ «սեմեակ»ը ունէր: Դժբախտաբար չկայ ուրիշ որեւէ լուսարանող աղբիւր մը այս մասին: Հաւանական կը մնայ ընդունել որ ան աւելի հին եղած ըլլայ, մինչեւ իսկ Ժ.Ը. դարէն:

Օրթագիւղի մէջ Դպրաց դասի մը գոյութիւնը անձանօթ է Թորգոմեանի եւ Ալլոյոյաճեանի: Նոր ժամանակներու մէջ, յատկապէս 1921ին, Օրթագիւղի մէջ կը յիշուի «Շնորհալի» Դպրաց Դաս մը, որ բազմաձայն խումբ մը ունի, ղեկավար ունենալով Գրեգոր Վ. Գուսան եւ որ պատարագ մատուցանել կու տայ ցնջեցեալ անդամներու համար իր տարելիցին¹⁷: Այս վերջին Դպրաց Դասը շարունակութիւնն է 1847ի եղածին՝ թէ նոր հաստատութիւն մը. չկայ բացատրութիւն:

4. ՀԱՅԿԱԶԵԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1857)
Հիմնուած է 1857 Դեկտեմբերին, նպատակ ունենալով «քատրոն մը կանգնել, ուր ազգային անցեալ դիւցազանց տեսարանները ներկայացուին¹⁸»:

Ընկերութիւնն ունեցած է 17 «Սորհրդական» (հիմնադիր) անդամներ, որոնցմէ կ'ընտրուի հետեւեալ վարչական Մարմինը.

Գարրիէլ Սուրբան	Պաշտպան եւ երաշխաւոր Ընկերութեան
Գրիգոր Քէհրեպարճեան	Նախագահ
Ստեփան Իշխմէճեան	Տեղակալ Նախագահի
Թովմաս Յակոբեան	Գանձապետ
Մանուկ Շահինեան	"
Ալէքսան Զալբեան	"
Յովհ. Տ. Մ. Վանանդեցեան	Ատենադպիր
Գրիգոր Տէյրիմէնճեան	Գործակալ
Մարգիտ Տ. Մ. Վանանդեցեան	"

¹⁵ Գաղ. Տարեգ., Ա., էջ 55:
¹⁶ 1848, թ. 303:
¹⁷ Ժողովուրդի Ձայնը, Կ. Պ. 1921, թ. 811:
¹⁸ Մասիս, 1857, թ. 309:

Ընկերութեան Կանոնադիրը, բաղկացած 22 Յօդուածէ՝¹⁹ առիթ չենք ունեցած տեսնելու:

Մեմուայը Հավատիս²⁰, խօսելով Ընկերութեան վրայ՝ կու տայ անոր դերասանական խումբի անունները:

Միուրթիւն՝²¹ «Հայկազեան» կը կոչէ Ընկերութիւնն եւ 1860 Յունուարին դադարած է, կ'ըսէ: Իսկ Արեւիք²² «Հայ Թատերական Ընկերութիւն» կ'անուանէ:

5. ԱՂՔԱՍԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1858)

Հիմնուած է 1858ին եւ իր նպատակն է «Հայագգի աղբատաց վիճակին բարելաւութիւնն քէ՛ ի բարոյակիւն եւ քէ՛ բնական մասին»²³: Հրատարակած է իր Կանոնադրութիւնը, զոր անկարող եղած ենք գտնել:

6. ԽՆԱՄԱԿԱՆՈՒՂԻ ՏԻԿՆԱՅՔ (1859)

Օրթագիւղի «Հոփսիսիմեանց» վարժարանի հիմնումէն (1859) քիչ ետքը կազմուած է Թաղին մէջ հայ տիկիներու Ընկերութիւն մը, որ կոչուած է «Տիկնայց Խնամակալութիւն», «Խնամակալ Տիկնայք»²⁴ կամ «Խնամակալուհի Տիկնայք»²⁵, միշտ զգուշանալով կցել ատոր «Ընկերութիւն» բառը: Այս «Խնամակալուհի Տիկնայք» են որ 1864ին ալ հաստատած են Օրթագիւղի «Աղբատարանի Ընկերութիւն Տիկնայց»ը, զոր վարը պիտի տեսնենք:

«Խնամակալուհի Տիկնայք» պաշտպանն եղած են «Հոփսիսիմեանց» վարժարանին: 1867ին իրենց գլուխ կանգնած է Տիկնի Նազը Վահանեան, «որ իր ուսումնասէր բարուրը Հոփսիսիմեանց վարժարանին Մեկեմեան եղած է»²⁶: Յօդուածագիր մը Մասիսի մէջ հիացում կը յայտնէ Խնամակալ Տիկնայց իրենց վարժարանին հանդէպ ունեցած գուրգուրանքին վրայ, որոնք, կ'ըսէ, «իրենց տեսչութեան ներքեւ եղած հաստատութիւնն ազգերնուս մէջ գրեթէ աղջկանց վարժարաններուն առաջինն բրեր են», նոյն իսկ «իրենց անձնական ջանիւքը նոր շէնք մը կանգնել եւ զայն բարոյապէս եւ նիւթապէս դարգացնելու»

¹⁹ Անդ:
²⁰ Կ. Պ. 1858, թ. 228:
²¹ Իզմիր, 1860, թ. 2, էջ 12:
²² Կ. Պ. 1898, թ. 3791:
²³ Մուսայի Մասեաց, Կ. Պ. 1858, էջ 79:
²⁴ Մասիս, 1867, թ. 811:
²⁵ Անդ, 1876, թ. 1912:
²⁶ Անդ, 1867, թ. 811:

յաջողեր են²⁷»: Պոլսոյ La Turquie թերթը վեր կը հանէ Հայ Խնամակալութիւնը այդ բացառիկ արդիւնքը²⁸:

Տիկնայց այս Ընկերութիւնը 17 տարի անընդհատ կը շարունակէ իր հոգածութիւնը «Հոփսիսիմեանց» վարժարանի հանդէպ մինչեւ 1876, երբ դրամական տարապայման նեղ կացութիւն մը անկարելի կ'ընէ վարժարանի բացումը, բայց մէկ կողմէ Թաղականութեան բարոյական քաջալերանքը, միւս կողմէ Թաղին ուսումնասէրներու ձեռնտուութիւնը հնարաւոր կը դարձնեն Խնամակալութեան՝ «17 տարիներէ ի վեր ստանձնած մայրական պաշտօնը շարունակելու»²⁹:

7. ԼՐԱԳՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1860)

1860 Դեկտեմբերին Օրթագիւղի մէջ կը յիշուի «Լրագրաց Ընկերութիւն» մը, որ յատուկ սրճարան մ'ունի, յանձնուած՝ «սափրիչ Մանուկ»ի, ուր կը ծախուէր «Թռչնիկ» թերթը³⁰: Լուսարանութիւն մը չենք գտած Ընկերութեան մասին: Անունն անձանօթ է ինչպէս Թորգոմեանի, նոյնպէս «Սկանակ»ին եւ Ալլոյոյաճեանի:

8. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1863—1864)

Օրթագիւղի մէջ 1857ին հիմնուած «Հայկազեան Թատերական Ընկերութիւն»ը՝ 1860ին արդէն չիջած էր, ինչպէս տեսանք: Միուրթիւն³¹ կ'ըսէ սակայն որ ան նորէն կը ջանայ վերականգնել:

Մեզի կը թուի թէ 1863ի վերջերը կամ 1864ի սկիզբը նոր անունով երեւան ելած է ան, այս անգամ կոչուելով — Համագրային Թատերական Ընկերութիւն — որուն ծագումի մասին առանց որեւէ ակնարկութեան մը հանդիպելու՝ 1864ի սկիզբը յանկարծ Մասիսէն յիշատակուած կը գտնենք: Վերջինս կը գրէ. «Օրթագիւղի Համագրային Թատերական Ընկերութիւնը երեք ներկայացումներէ հաւաքած դրամովը նուիրեց (Ս. Փ. Հիւանդանոցին) 400 օխայ բակլա, 400 օխայ սիսեռ, 140 օխայ պէօրիւճէ, 50 օխայ թահին հէլվասը³²»:

Ուրիշ տեղ որեւէ յիշատակութեան չենք հանդիպած Ընկերութեան մասին:

²⁷ Անդ:
²⁸ Անդ, 1874, թ. 1603:
²⁹ Անդ, 1876, թ. 1912:
³⁰ Մասիս, 1860, թ. 464:
³¹ Իզմիր, 1860, էջ 12:
³² Մասիս, 1864, թ. 635:

9. ԱՂԲԱՏԱՆՆԱՍ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՏԻԿԱՆՅ (1864)

Պուրայ Մասիսը 33 1864 Ապրիլ 4 թուով կը ծանուցանէ. «Եթէ գթութիւնը երկրիս երեսէն ի սպառ հալածի, տակաւին կանանց կուրծքին տակ ապաստանարան պիտի դռնէ . . . ուստի ոչ նուազ բերկրութեամբ կը լսենք թէ տասնեւինգ օրէ ի վեր Օրթագիւղի մէջ բարեսէր տիկնայք Ընկերութիւն մը կազմեր են գիւղին մէջ գտնուած աղքատները խնամելու ազնիւ նպատակաւ»:

Օրթագիւղի Հայ Տիկնանց 1864 Մարտ 20ին հիմնած Ընկերութիւնն է — «Աղքատախնամ Ընկերութիւն Տիկնանց» —, ինչպէս կ'անուանեն զայն հիմնադիրները իրենք՝ Մասիսի ուղղած իրենց մէկ նամակին մէջ 34:

Ընկերութեան Ատենապետ Տիկ. Նազըր Վահան չնորհակալ կ'ըլլայ Մասիսի, որ առաջին անգամ ծանուցած էր Ընկերութեան անունը 35:

Հիմնադիր Տիկինները իրենց մէջէն 12 հոգի ընտրելով՝ կազմած են Ընկերութեան Տնօրէն Ժողովը, որուն յանձնած են բոլոր գործերու վարչութիւնը: Հետեւաբար միայն Տնօրէն Ժողովի 12 անդամները չեն Ընկերութեան Հիմնադիրները:

Ահա Ընկերութեան Տնօրէն Ժողովի անդամներու կազմը.

Տիկին Ազապի Եոսուֆեան	
» Ալէմ Չայեան	
» Ալէմ Պայիկեան	Տնօրէն
» Աննիկ Ճանճեան	
» Բուբուլ Երլուզեան	Գանձապետ
» Եղիսարեթ Եոսուֆեան	
» Էֆտիկ Սինանեան	
» Բսկուհի Գարրիէլեան	
» Նազըր Վահանեան	Ատենապետ
» Նեմզար Պուլիուրեան	
» Նունիա Կարմիրեան	
» Տիրուհի Փափազեան	
Օրթորդ Մըրուհի (յետոյ Տիւսար) Վահանեան	Օգնական Ատենադպիր 36

Ընկերութեան կենդանացողին է Հռիփ-սիմեանց վարժարանը: Իսկ նպատակը սա. «Անօգնական հիւանդ տառապելոյց բժիշկ հոգալ, չքաւոր եւ անկարող ծերերը նիւթապէս մխիթարել, բազմաթիւ մանր տղայոց մայր եղող այրի տառապեալ եւ անօգնական

33 1864, թ. 634:
34 Մասիս, 1864, թ. 640:
35 Մասիս, անդ:
36 Անդ՝ թ. 636:

կանանց նպաստամտոյց ըլլալ, վերջապէս հոգ տանիլ ըստ իւր կարողութեան աղքատին թշուառ վիճակը լաւացնելու 37»:

«Աղքատախնամ Ընկերութիւն Տիկնանց»ը ունի 16 կէտերէ կազմուած «Հիմնական Կանոնք», հրատարակուած Մասիսի մէջ 38, որոնցմէ յիշենք քանի մը հատը.

Ընկերութեան ամսական անդամավճարն է 5 դուրուշ (Յօդ. Գ). բաժանորդութեամբ կամ ուրիշ նպաստներով մասնակից եղող անձերը՝ միայն պատուոյ անդամ կը համարուին եւ վարչութեան խառնուելու իրաւունք չունին (Յօդ. Դ). Ընկերութեան Վարչութիւնը 12 Տիկիններէ բաղկացած Տնօրէն Ժողովի մը յանձնուած է, որ Ընկերութեան Հիմնադիր Տիկիններէ ընտրուած է (Յօդ. Ե). Տնօրէն Ժողովը արտօնուած է բարի գործերու մատակարարութեան համար այրեր ալ դործակից ընտրել (Յօդ. Թ). Տարին մէկ անգամ Ընդհանուր Ժողով կազմելով՝ Տնօրէն Ժողովը պիտի ներկայացնէ տարեկան հաշուեկշիռը եւ ըրած բարեգործութեանց ցուցակը (Յօդ. ԺԲ). Տնօրէն Ժողովը՝ իւր նիստերուն մէջ ներկայ դռնուող անդամներու մեծամասնութեան հաւանութեամբ ըրած բոլոր որոշումները կը գործադրէ, առանց բացակայ եղող անդամներու հաւանութեան սպասելու (Յօդ. ԺԳ):

Ահա՛ Ընկերութեան տասամսեայ գործունէութեան արդիւնքը. Իննը ընտանիքի ձրի բնակարան տրուած է, բժիշկ մը յատկացուցած է բոլոր աղքատներու, որոնց 527 անգամ այցելած է, աղքատ ընտանիքներու 3308 հոխա հաց բաժնած է, ութ ընտանիքի դրամական նպաստ յատկացուցած է, երեք աղքատարնակ տուն ձրի նորոգած է, շատ մը կարօտեալներու զգեստ եւ դրամական նպաստ ըրած է, Չատկին բոլոր աղքատներուն բրինձ, կարագ եւ հաւկիթ բաժնած է, աղջիկ մը ամուսնացուցած է, արհեստաւորի մը՝ գործիքի հարկ եղած դրամը տուած է, հիւանդ պանդուխտ մը՝ հայրենիքը դրկած է, այրի եւ աղքատ երէցինձ մը պարտքը վճարած է, եւ այլն, եւ այլն 39:

Ընկերութեան տասամսեայ Մուտքն եղած է՝ 22,759 դուրուշ, իսկ Ելքը՝ 18,085 դուրուշ: Ատկէ զատ վիճակահանութենէ մը շահած է 13,939 դրուշ, զոր արժեթուղթի վե-

37 Անդ:
38 1864, թ. 640:
39 Մասիս, 1864, թ. 678:

րածելով՝ անոր տոկոսը տարեկան եկամուտ ըրած է 40:

Օրթագիւղի երիտասարդներու եռանդուն խումբ մը 1866ի Բարեկենդանին 9ը թատերական ներկայացում կու տայ ի նպաստ «Աղքատախնամ Տիկնանց», որոնցմէ վերջինին աղքատիւական ճառ մը կը խօսի Մկրտիչ Պէշեկթաշեան՝ խանդավառելով բոլորը 41:

Ընկերութեան 1872ի Հաշուեկշիռը.
Մուտք դուրուշ 24,077
Ելք դուրուշ 20,809 42

Ա. Ալպոյաճեան 43 Ընկերութիւնս համարած էր «կանանց ձեռքով հիմնուած առաջին Ընկերութիւնն»: Ինչպէս այլուր 44 ապացուցած ենք՝ Օրթագիւղի «Աղքատախնամ Ընկերութիւն Կանանց»ը՝ կանանց ձեռքով հիմնուած առաջին Ընկերութիւնը չէ: Ատկէ 17 տարի առաջ Խաւարի մէջ հայ տիկիններէ կազմուած Ընկերութիւն մը կայ 45:

10. ՄԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1864)

«Օրթագիւղի Ս. Թարգմանչաց վարժարանին տեսչութիւն, որ ամէն ջանիւք յիշեալ դպրոցին յառաջգիմութեանը կ'աշխատի, իր պաշտպանութեամբը դպրոցին առաջին եւ երկրորդ դասու աշակերտներէն Սանուց Ընկերութիւն մը կազմել է յանուն Ս. Թարգմանչաց վարժարանին, որուն նպատակն է ձրի դասատուութիւն ընել ազգային ուսումնաւեր պանդուխտ եղբարց» 46:

Ընկերութեան հիմնումի ճշգրիտ թուականը ունի Ա. Ալպոյաճեան 47, այն է՝ 1864 Մարտ 24: Ընկերութեան առաջին կազմակերպիչն եղած է Կարապետ ձիգմէճեան, դպրոցի Հոգաբարձուներէն Մկրտիչ Ճանըմեան հովանաւորած, իսկ ուսուցիչներէն Սիմոն Իգմիրեան (յետոյ Մատթէոս Կաթողիկոս) քաջաբերած է զայն 48:

Ընկերութիւնը 1864 Նոյեմբերին ծանուցում մը հրատարակելով՝ 49 կ'իմացնէ թէ Կիրակի օրերը ձրի պիտի աւանդուին հե-

40 Անդ:
41 Մասիս, 1866, թ. 728: — Մէնմ. Հավատիս, 1866, թ. 634:
42 Մասիս, 1873, թ. 1374:
43 Գաղ. Տարեգ., Բ., էջ 86:
44 Տէ'ս Յառաջ, Պարիս 1952, թ. 2129:
45 Տէ'ս Հայաստան, Կ. Պ. 1847, թ. 32:
46 Մասիս, 1864, թ. 636 Նոյեմբեր:
47 Անդ՝ էջ 85:
48 Անդ:
49 Մասիս, 1864, թ. 666:

տեսեալ նիւթերը. Ազգ. Պատմութիւն, Թուրանութիւն, քերականութիւն, քրիստոնէական վարդապետութիւն, երաժշտութիւն: Ատկէ զատ մասնաւոր դասեր պիտի տրուին գաղղիերէնի եւ տաճկերէնի: Չորեքշաբթիները Կիրակի օրուան դասերու կրկնութիւնը տեղի պիտի ունենայ: «Դասագրքերու, քաղթի, գրչի, եւ այլն, ծախք ընելու կարողութիւն չունեցողները աւէն պիտի եղածը կ'ընդունին. ընթերցասիրաց փափաքը կարելի եղածին չափ յազեցնելու համար՝ պատրաստ կը գտնուին նաեւ մէկ քանի օրագիրք եւ օդատկար գիրք ազգասէր անձերէ նուիրեալ»:

Օրթագիւղի Կաթողիկէ Հայոց «Լուսաւորչեան» վարժարանի աշակերտները 1867 Փետր. 25ին թատերական բացառիկ ներկայացում մը կու տան՝ ի նպաստ Ս. Թարգմանչաց վարժարանի «Սանուց Ընկերութեան»: Թատերախաղի նիւթերն են. Վահան եւ Չավիշ Կասիանոս 50:

Մասիսի մէջ 51 յօդուածագիր մը 1871ին ցաւով կը դիտէ որ «Սանուց»ը «կը ննջէ ի խոր քուն յաւիտենական»:

1872ին ձիգ մը կ'ըլլայ Ընկերութեան վերակազմումի. կը ձեռնարկուի յատուկ «Թանգարան»ի մը (Գրադարան-Ընթերցարան) շինութեան, որուն համար Ընկերութիւնը քանի մ'անգամ Ընդհ. Ժողով ալ ըրած է. Ընդհ. Ժողովի Ատենապետ՝ Անդրէաս Կարապետեան վերջին կարգադրութեան մը համար 1872 Հոկտ. 9ին բոլոր անդամները դարձեալ Ընդհ. Ժողովի կը հրաւիրէ 52:

Ընկերութիւնը իր գոյութիւնը մինչեւ 1875 կրցած է պահել 53:

11. ԲԱՋԱԼԵՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՕՐԹԱԳԻՒՂԻ (1867)

Մինչ Օրթագիւղի Հռիփսիմեանց աղջկանց վարժարանը, շնորհիւ «Խնամակալուհի Տիկնանց» 1867ին ծաղկուն շրջան մը կը բուրբէր՝ 54 նոյն թաղի Ս. Թարգմանչաց մանչերու վարժարանը անկաճութեան օրեր կ'ապրէր, չունենալով իրեն պաշտպան ու նպաստող Ընկերութիւն մը. շատոնց մարած էր թաղին «Ս. Թարգմանչաց Ընկերութիւն»ը, գլխաւոր պաշտպանը վարժարանին:

50 Մէնմ. Հավատիս, 1867, թ. 685:
51 1871, թ. 1096:
52 Մասիս, 1872, թ. 1297:
53 Գաղ. Տարեգ., Բ., անդ:
54 Մասիս, 1867, թ. 817:

Օրթագիւղի մանչերու վարժարանի ցաւալի վիճակը մատնանիչ ընելով՝ յօղուածի մը մէջ Պ. Վ. Պառնասեան կը հարցնէ. «Արդեօք ծայրայեղութիւնը աղջկանց դաստիարակութիւնը մանչերէն առաջ անցուցեր է... եթէ այրերը Խնամակալ Տիկնանց չափ ալ չեն կրնար բարեկարգ վարժարան մը սրահել, ինչո՞ւ համար տեղերնին տիկիները զնելով իրենք ետ չեն քաշուիր»⁵⁵:

Պառնասեան հոն⁵⁶ կ'իմացնէ սակայն թէ Օրթագիւղի «մանչերու վարժարանն ալ բարեկարգելու համար երկու ամսէ ի վեր պէտք եղած ջանքերը կ'ըլլան եւ Քաջալերիչ Ընկերութիւն մը կազմելով, անոր եւ թագ. Խորհրդին ջանիւք Նախկիրքարան մը եւ Ուսումնարան մը բացուեր է»:

Օրթագիւղի այս նոր Ընկերութեան մասին Մասիսի մէջ⁵⁷ անստորագիր ուրիշ յօդուածագիր մը կարեւոր լուսարանութիւն կու տայ: Վերջինս կը գրէ. «Օրթագիւղի Թարգմանչաց վարժարանը 10 տարիէ ի վեր հետզհետէ աղէկ ու գէշ ընթացքներ ունեցած էր: Վերջին ատեններս երեսէ՛ս ձգուած էր... ազնուսպետական անձեր... գուն գործեցին Թաղական խորհրդոյ երիտասարդագոյն մէկ անդամին՝ այն է Եւսուփեան Տիգրանիկ աղա ազնիւ երիտասարդին միջնորդութեամբ Ընկերութիւն մը կազմել մասնաւոր, գիւղին մէջ հասարակաց դաստիարակութիւնը ծաւալելու նպատակաւ: Տիգրանիկ աղան Լօնտօնէն նոր եկեր էր եւ ինչպէս ամէն ատեն այդպիսի ջանադրութիւններ ցոյց տուած է, նոյնպէս ալ այս անգամ ստորագրութիւն մը բացաւ եւ առաջարկուած Ընկերութիւնը կազմող անդամներ հաւաքեց: Անդամոց թիւն անսահման պիտի ըլլար, բայց 34-ի երբ հասաւ՝ հոն կանկ առաւ: Անգամ ստորագրուող տարին կէս ոսկի պիտի վճարէր եւ Ընկերութեան անունը «Քաջալերող Ընկերութիւն Օրթագիւղի» գրուեցաւ: Նպատակը ոչ միայն ուսուցման գիրքով՝ այլ նաեւ քանգարաններով եւ քատերախաղերու ներկայացմամբ ալ կրթութիւն տարածել էր»:

Յօդուածագիրը շարունակութեան մէջ կ'ըսէ որ «Ընկերութեան նիստերուն մէջ այնպիսի երկար ու ապարդիւն վիճարանութիւններ բացին՝ որք գալորոցական տեսչու-

թիւն մը եւ հետեւապէս բարեկարգութիւններն ուշացնելէ զատ՝ պատճառ եղան նաեւ գործին հաստատուն հիմ մը չդնելու»:

Ի վերջոյ գալորոցը կը բացուի եւ «Քաջալերող Ընկերութիւն»ը կը խոստանայ «տարեկան բաց մ'եղած ատեն՝ 6000 զուրուշ նպաստ վճարել»⁵⁸:

Ընկերութիւնը կազմակազմ շարունակած է իր գոյութիւնը մինչեւ 1871 Յունիս, երբ յօղուածագիր մը կը գրէ թէ «Քաջալերական Ընկերութիւնը անուճով միայն կայ»⁵⁹:

Ընկերութիւնս անձանօթ է Ալլոյոյա՝ ճեանի:

12. ԲԱՐԵՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1867)

Թատերական Ընկերութիւն մըն է Օրթագիւղի «Բարեսէր Ընկերութիւն»ը, որ սխալմամբ կոչուած է «Բարեսիրաց Ընկերութիւն»⁶⁰:

Ընկերութեան ծագումը 1863ին կը գնէ յայտնի դերասանապետ՝ Պետրոս Ա. Մաղաքեան⁶¹: Եթէ տպագրական կամ այլ սխալ չէ Մաղաքեանի այդ թուականը՝ կրնայ այն խաստով հասկնալ որ Օրթագիւղի «Համագոյնի Թատերական Ընկերութեան» (1863—1864) շարունակութիւնը կամ անոր հետ ձուլումը կը համարի «Բարեսէր Ընկերութիւն»ը:

Ուշագիր կ'ընենք սակայն որ «Բարեսէր Ընկերութիւն»ը 1868էն առաջ չի յիշուիր հայ թերթերէն: 1863—1868ի երկար լուսութիւնը հայ թերթերու՝ չի կրնար մեկնուել, եթէ ընդունինք որ ան 1863ին հիմնուած է:

Բարեսիրտարար Ժամանակակից եւ Օրթագիւղի Թաղեցի մը. — Միլոտի Գաղանձեան — 1868 Փետր. 1ին Օրթագիւղէն Բերայի ժամանակ Հանդէս Հայրենաճանաչութիւն գրելով՝ կը լուծէ այս հարցը. «19-րդ դարու մէջ ապրելու արժանացող Ազգիս ներկայ ցաւալի վիճակին վրայ ի խորոց սրտէ կարեկցող վառվառն եւ ազգասէր երիտասարդաց խումբ մը, իրենց անձնական շահը ազգայինին գոհելով, քանի մը տարիէ ի վեր գիւղին աղջիկ եւ մանչ տղայոց վարժարանաց մէջ թատերական ներկայացումներ տարով, շահը գիւղիս թշուառ աղքատաց նուիրեց: Այս տարի այս խումբը մանչ տղայոց

⁵⁸ Անդ:
⁵⁹ Մասիս, 1871, թ. 1096:
⁶⁰ Նոր Լուր, 1925, թ. 222: — Թարգման, Երեւ. Չէլչոյ, անդ՝ էջ 675:
⁶¹ Արեւիկ, 4. Պ. 1889, թ. 1741:

⁵⁵ Անդ:
⁵⁶ Մասիս, անդ՝ ծանօթութիւն:
⁵⁷ 1867, թ. 813:

վարժարանին մէջ փոքրիկ, բայց փառաւոր թատրոնի մը շինութեան ձեռնարկելով, յաջողութեամբ ի գլուխ հանեց եւ Բարեսէր անուամբ Ընկերութիւն մ'ալ կազմելով, ուխտեց 5 տարի նոյն քատրոնին մէջ ներկայացումներ տալ եւ հայրաքառած գումարէն քատրոնին շինութեան համար վատնելու զրամը հանելով, մնացորդը գիւղիս մէջ ազգային ամենագալի պիտոյից մէկուն շնորհել» (Ժամանակ Հանդէս Հայրենաճանաչ, 4. Պ. 1868, թ. 134, Փետր. 17):

Ժամանակ թերթի խմբագրութիւնը կ'աւելցնէ իր կողմէ. «Միջագիւղի մէջ քատրոնի շինութեան եւ Թատերական ներկայացման փոյթ տանող Բարեսէր Ընկերութեան մեր շնորհակալութիւնն եւս կը մատուցանենք: Քանի մը տեսակ օգուտներ ունի այս Ընկերութիւնը. նախ որ թատերգութիւնները՝ մանաւանդ ազգայինները՝ մեծ տպաւորութիւն կ'ընեն հանդիսականաց վրայ եւ մէյրէկ գործական դասեր կ'աւանդեն. 2. որ ձմեռնային գիշերներուն երկայնութիւնը փոխանակ Խումար խաղալով եւս եւս անցնելու, այնպիսի հրահանգէլ զրօսանքներով կ'անցունէ ժողովուրդը. 3. որ Միջագիւղի Թատերասէր մասին մեծ դիւրութիւններ կ'ընծայէ, Բերա գալու եւ հոն պանդոկի մէջ զեւեր անցնելու դժուարութիւններէն կ'ազատէ» (Անդ):

Գաղանձեանի վերոյիշեալ գրութեան մէջ «այս տարի» բացատրութիւնը կարելի չէ առնել 1868 տարուց համար, նկատելով որ Փետր. 1ին գրուած ըլլալով ան՝ 1868ի Յունուար 1—Փետրուար 1ի կարճ միջոցին մէջ դժուար թէ թատերաստրը կարող եղած ըլլայ «ձեռնարկել եւ գլուխ հանել փառաւոր թատրոնի մը շինութիւնը»: Ըստ մեզ Գաղանձեանի ըսածը մէկ տարուան ընթացքին, այն է՝ 1867—1868 ձեռնարկուած եւ գլուխ հանուած պէտք է հասկնալ: Ինչպէս յաջորդ վկայութիւնը կը հաստատէ՝ «Բարեսէր Ընկերութեան հիմնումը 1867ին տեղի ունեցած է»:

Բարեսէր Ընկերութեան անդամ՝ Տ. Ս. Սէթեանի 1872ին այս մասին տուած լուսարանութիւնը կարեւոր է. «1867 քուսկանին Օրթագիւղի մէջ Բարեսէր անուամբ Ընկերութիւն մը կազմուեցաւ... քատերական ներկայացութեան միջոցաւ ազգին մէջ յաւերժական յիշատակ մը քողելու նպատակաւ: Ես ալ անոր անդամակիցներէն էի,

երբ 69 թուականին անձնական արգելք մը կատեց զիս այդ անդամակցութենէն»⁶²: Ընկերութիւնը կազմած են հետեւեալ անձերը.

- Թովմաս Պեռեանց
- Մովսէս Փափագեան
- Ստեփան Փափագեան
- Արթուր Ոսկեմատ
- Յակոբ Բիւլիւլեան
- Ռուբէն Սէֆէրեան
- Խաչիկ Սէֆէրեան⁶³:

Ընկերութեան անդամ եղած՝ յետոյ հրաժարած են.

- Սեպուհ Էսկիճեան
- Յակոբ Պիպեճեան
- Ռոմանոս Գէորգեան
- Դանիէլ Գարամաճեան⁶⁴:

Մամուլի համեմատ⁶⁵ Բարեսէր Ընկերութեան նպատակն էր. «Բարոյական արդեանց հետ՝ ազգին վարժարանաց եւ միանգամայն ազգ. Հիւանդանոցի խղճալեաց համար նիւթական արդիւնք մը հանել»: Ընկերութիւնը 1870ին Բերա Նաումի թատրոնի մէջ ալ տուած է ներկայացում⁶⁶:

Ընկերութիւնը մինչեւ 1869 ինքը ներկայացում տալէ վերջ⁶⁷, 1869—1870ին ալ կը շարունակէ իր ներկայացումները⁶⁸: 1870ին Օրթագիւղի Ս. Թարգմանչաց վարժարանի տեսչութիւնը Բարեսէր Ընկերութեան կը յանձնուի⁶⁹: Կերեւայ թէ այս ատիւ է որ Ընկերութիւնը թատերասրահի փոփոխութիւն մը կ'ընէ, մեծցնելով Թարգմանչացի սրահը: Այս մասին լուսարանութիւն մը կու տայ Սմբատ Քէսէճեան, ինչպէս կը գրէ Նշան Պէշիկթաշլեան. «Օրթագիւղի Ազգային Վարժարանի բակին մէջ ընդարձակ սրահ մը կար՝ երկու բաժանումով: Ժամանակին այդ մեծ սրահին մէջ կը տրուէին ներկայացումներ, սակայն Թատերասէր հասարակութեան շատ նեղ կու գար: Թատերական մասնախումբը 1869—1870 եղանակին համար, իր

⁶² Մասիս, 1872, թ. 1162:
⁶³ Արեւիկ, անդ:
⁶⁴ Մասիս, անդ:
⁶⁵ Մամուլ, 4. Պ. 1870, էջ 518:
⁶⁶ Մասիս, 1870, թ. 958:
⁶⁷ Մասիս, 1869, թ. 907:
⁶⁸ Մամուլ, 1869, էջ 51. 1870, էջ 435, էջ 526—527: — Մասիս, 1870, թ. 958:
⁶⁹ Մամուլ, 1870, էջ 518: — Ասիս, 4. Պ. 1872, էջ 62:

անօրէն, Մաղաքեանը հրաւիրած էր: Ու այդ բաժանումները միացնելով խոշոր քաղաքաւարահ մը ստեղծուած էր⁷⁰:

Թատերասրահը մեծցնելէ վերջ տրուած առաջին ներկայացումը կ'ըլլայ Թովմաս Պեռեանցի «Խաբուած Ակնցի» երեք արարնոց Կատակերգութիւնը⁷¹: Ա. Ալլոյսաճեան, ըսելէ յետոյ թէ Օրթագիւղի Բարեսէր Ընկերութիւնը (1867—1872) կազմուած էր նոյն թաղին մէջ գործող երկու քաղաքախումբերու միացումով, կը գրէ. «Իր առաջին ներկայացումը կ'ըլլայ Թովմաս Պեռեանցի «Խաբուած Ակնցի» կատակերգութիւնը⁷²», ինչ որ իրականութեան չի համապատասխաներ, քանի որ Ընկերութիւնը մինչև 1869 ինքը ներկայացում տուած էր⁷³:

Միայն է նոյնպէս Սմբատ Քէսէճեանի կարծիքը թէ 1869—1870 «Քուակահանի է որ կազմուեցաւ Օրթագիւղի Բարեսիրաց Ընկերութիւնը»⁷⁴: Մինչ ան 1867ին կազմուած էր արդէն, ինչպէս տեսնուի:

Բարեսէր Ընկերութեան, անշուշտ 1870ին, սարքած արտակարգ երեկոյթի մը մէջ — ինչպէս կը պատմէ Սմբատ Քէսէճեան — կը խօսի Մարկոս Աղաբեկեան եւ կը տրուի ներկայացում մը: «Այդ ներկայացման ներկայ էր ճարտարապետ Յակոբ պէյ Պալեան իր ընտանիքով...: Քանի մը օր յետոյ Յակոբ պէյ Պալեան իր ազգայնքը հրաւիրելով Բարեսիրաց Ընկերութեան գործադիր ժողովոյ անդամները, անոնց կ'աւետէ թէ ճարտարապետ Պետրոս Նեմէջի հրաման տուած է պատրաստել թատրոնի մը յատակադիւր: Թէ այդ թատրոնին շինութեան ամբողջ ծախքը ինքը կը հոգայ ու կը նուիրէ Բարեսիրաց Ընկերութեան» (Հայրենիք Ամսագիր, անդ):

Ալլոյսաճեան «Թատերասիրաց» թատրոն կ'անուանէ Պետրոս Նեմէջի շինածը (Գաղ. Տարեգ., Բ., էջ 87):

Յակոբ Պէյ Պալեան յետոյ անգամ մ'ալ վերաշինած է Ընկերութեան նուիրած թատրոնի շէնքը (Մասիս, 1872, Թ. 1262):

70 Հայրենիք Ամսագիր, Բոստոն 1952, Թ. 11, էջ 11:
71 Հայրենիք, անդ:
72 Գաղութնայ Տարեգիրք, Բ., էջ 87:
73 Մասիս, 1869, Թ. 807: — Ինչպէս տեսնուի Պեռեանցի թատերասիրաց ներկայացումը կ'երեւայ 1869—1870ին: «Երկու թատերասիրութեան միացումով» բացատրութիւնն ալ կ'ստանալէն է, քանի որ ժամանակակիցը՝ Գաղանճեան՝ միայն «Երկուստարկաց խումբ մը» ձեւը կը գործածէ:
74 Հայրենիք, անդ:

Սուրիանդակ (Կ. Պ. 1908, Թ. 71) կը նկարագրէ թատրոնս. «... միակը տեսակին մէջ ամբողջ Վոսփորեան գիւղերուն մէջ, իր ընդարձակ բեմով, երկու յարկի վրայ երեսուն երեք հատ օթեակներով եւ նաեւ նոր աւելցուած վերնասրահով (galerie), ծխարաններով, եւ այլն, թերեւս կարենայ նախանձը շարժել քաղաքի թատրոններուն»:

Դժբախտաբար 1870էն սկիզբ առած ներքին երկպառակութիւնը՝ 1872ին կը կազմալուծէ Բարեսէր Ընկերութիւնը (Հմմտ. Մասիս, 1872, Թ. 1262): 1872ի Հոկտեմբերին Պետրոս Մաղաքեան ծանուցումով մը կ'իմացնէ թէ իր խումբով ներկայացում պիտի տայ Բարեսէր Ընկերութեան թատրոնին մէջ: Ուրեմն՝ Ընկերութեան թատրոնը վարձու կը տրուի (տե՛ս Մասիս, 1872, Թ. 1306): Մաղաքեանի Թատերասրահի եւ խաղացանկի մասին մանրամասնութիւն ունի Պէշիկթաշեանի վերոյիշեալ յօդուածը (Հայրենիք, անդ՝ էջ 11—15):

1873 Յունուար 29ին Բարեսէր Ընկերութեան թատրոնը Լսարանի կը վերածուի, ուր կը բանաստեղծուի Գոկո. Շիշմանեան՝ Ազգ. Պատմութեան (Մասիս, 1873, Թ. 1342), Տիրքան Եռուստեան՝ Յառաջադիմութեան (Ազգ. Լսարան յՕրթագէօյ, Կ. Պ. 1873, խօսուած ճառը) մասին, եւ այլն: 1873ին Օրթագիւղի «Լսարանի Ընկերութեան» հիմնումէն վերջ՝ ա'լ միշտ տեղի կ'ունենան հոն ճառասուտութիւններ:

1908ին Զանգեր կ'ըլլան Բարեսէր Ընկերութեան թատրոնի վերակառուցումին: Այդ առթիւ մասնաւոր Յանձնախումբ կը կազմուի շէնքին նորոգութեան համար, կը ձեռնարկէ դրամահաւաքի⁷⁵:

13. ԼՍԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1873)
Նախ ճշգրեց անունը. «Լսարանական Միութիւն» կը կոչեն Օրթագիւղի այս Ընկերութիւնը նոր Լուր⁷⁶, Թորդոմեան⁷⁷ եւ Ալլոյսաճեան⁷⁸: Մինչ ժամանակակիցներ ունին՝ «Լսարանի Ընկերութիւն»⁷⁹:
Այժմ քանի մը խօսք «Լսարան»ի վրայ: Մեր մէջ Լսարանի (conference) գաղափարը, իրրեւ առանձին կազմակերպութիւն

75 Սուրիանդակ, 1908, Թ. 71:
76 1925, Թ. 224:
77 Երեմ. Չէլիպ., անդ՝ էջ 675:
78 Գաղ. Տարեգ., Գ., էջ 113:
79 Հմմտ. Մասիս, 1873, Թ. 1369: — Ազգային Լսարան յՕրթագէօյ, Կ. Պ. 1873:

առնեստուութեանց կամ ճառասուտութիւններու՝ համեմատաբար նոր է: Սկիզբը կ'ընայ համարուել այն, զոր Գարբիէլ Այլազովսկի եւ Նարայէյ ըրած էին «Ուալիպեան» վարժարանի մէջ փոփոխակի ճառասուտութիւններ սարքելով, ուր մինչև 200 հոգի ունկնդիր կ'ունենային: Իրենց նիւթն էր ընդհանուր կամ ազգ. Պատմութիւն, Աշխարհագրութիւն, եւ այլն: Այդ ճառասուտութիւնները տեւած են մինչև 1860⁸⁰:

Պորոյ Հայութեան մէջ Լսարանական շարժումը 1870էն կը սկսի, շրջան ընելով Սամաթիա, Գուգարի, Ենիկապու, Ղալաթիա, Սկիւտար, եւ այլն, տեղտեղ մասնաւոր Ընկերութիւններ ալ կազմուելով: ճառասուտներն էին Հայեր, մերթնաեւ օտարներ, մասնաւոր Հայադէտներ: Իսկ նիւթը կը կազմէին Ընդհանուր եւ Ազգ. Պատմութիւնը, Աշխարհագրութիւնը, Ախտարանութիւնը, Մարդակազմութիւնը, Կրթական-Մշակութայինը, Դաստիարակութիւնը, եւ այլն:

Օրթագիւղի մէջ Լսարանի բացումը եղած է 1873 Յունուար 29ին Բարեսէր Ընկերութեան սեպհական թատրոնի շէնքին մէջ, ուր մուտքը ձրի, ատենաստները ընտրուած անձեր եղած են: Հոս խօսած են Գոկո. Շիշմանեան, Իրէկճեան, Եռուստեան եւ Օսկանեան, որոնցմէ ոմանց ճառերը առանձին լըյս տեսած են⁸¹:

Օրթագիւղի «Լսարանի Ընկերութիւն»ը կը հիմնուի՝ «Բարեսէր Ընկերութեան» քայքայումէն վերջ, հաւանօրէն 1873 Յունուար-Փետրուարին⁸²:

Սեպուհ Յ. Իսկիճեան՝ Մասիսի ուղղած էր մէկ նամակին մէջ ըսելէ յետոյ թէ Օրթագիւղի Լսարանին հիմնարկութեան մէջ թաղին Բարեսէր Ընկերութիւնը որեւէ գործ չէ ունեցած՝ կը գրէ. «Օրթագիւղի Ազգային Լսարանին հաստատութեան առաջին եւ գլխաւոր պատճառ եղած են Միքայէլ Թօփիսեանի եւ Ն. Օտեան Էփեմիտիք, մանաւանդ Ն. Օ. Էփեմիտին, որ բարեհաճեցաւ մասնաւոր հրաւիրագրով գիւղացւոց ընտիր մէկ մասը ի ժողով գումարել իւր տունը եւ պարգել իրենց նպատակը: Հրաւիրեալը

80 Մասիս, 1873, Թ. 1361:
81 Նոր Լուր, 1925, Թ. 224:
82 Հմմտ. Մասիս, անդ: — Ազգային Լսարան յՕրթագէօյ, Կ. Պ. 1873, էջ 46:

(20 հոգւոյ չափ) 4—5 դիշեր քանի մը ժամ նիստ ընելէ յետոյ՝ համաձայնութեամբ կանոնագրութիւն մը խմբագրելու յաջողեցան, զոր ներկայ եղող պատուարժան անձինք ստորագրելով հաստատեցին Ազգային Լսարանի Ընկերութիւնը, որուն Տնօրէն ժողովոյ Մեծ. անդամը են.

- Յակոբ Պէյ Պալեան
- Տիրքան էֆ. Եռուստեան
- Յովսէփ էֆ. Շիշմանեան
- Նշան էֆ. Օտեան
- Միքայէլ էֆ. Թօփիսեան:

Պատիւ կը համարեմ սա եւս յիշելու թէ Լսարանի Ընկերութեան անդամոց թիւը ցարդ յետուն անցած է⁸³:

Ընկերութեան հիմնումը արձագանգելով՝ կը գրէ Պորոյ Օրթագիւղ (1873, Թ. 932, Մայիս). «Կը լսենք թէ Վսեմ. Պալեան Յակոբ պէյի նախագահութեանը տակ 36 դրագէտներէ բաղկացեալ Ակադեմիական Ընկերութիւն մը հաստատուելու վրայ է ի Միջագիւղ (Օրթագիւղ), որու Կանոնադիր խմբագրած է Մեծ. Ռուսինեան էֆէնտիք»:

1873 Մարտին վերջ Լսարանի Ընկերութեան կաճառին մէջ խօսելու հրաւիրուած են հետզհետէ Որթմեան եւ Նարայէյ Սրբազանները, Օրթմեան, Միպիլեան, Դուրեան Վարդապետները, ինչպէս նաեւ Պրոֆ. Ճէճիզեան, Գոկո. Հէքիճեան, Պէշիկթեան, Աղաբեկեան, Գոկո. Մորտման եւ Գոկո. Ուոշըրըն, որոնցմէ վերջինները խօսած են Վանի սեպագրութիւններու եւ Չայնազիր գործիքի վրայ, որ նոր հնարուած էր⁸⁴:

Նոր Լուրի⁸⁵ յօդուածագրին համեմատ Լսարանի Ընկերութեան ճառասուտութիւնները տեւած են մինչև 1878: Սակայն 1878էն վերջն ալ շարունակուած են անոնք, գուցէ մինչև 1880: Մեզի ծանօթ է 1879ի Օրթմեանի ճառասուտութիւնը՝ նիւթ ունենալով «Հայուն անցեալը, ներկայն եւ ապագան»⁸⁶:

Լսարանի Ընկերութեան սարքած բանաստեղծութիւններու վայրը ընդհանրապէս Բարեսէր Ընկերութեան թատերասրահն էր⁸⁷:

Չենք տեսած Ընկերութեան Կանոնագիրը:

83 Մասիս, 1873, Թ. 1369 Ապրիլ 3:
84 Նոր Լուր, 1925, Թ. 224:
85 Անդ:
86 Մասիս, 1879, Թ. 2230:

14. ՀԱՅԿԱԳՆ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1873)

Սիմէօն Հանչերեան՝ Օրթագիւղի «Հայկազն Երիտասարդական Ընկերութեան» կողմէ ուրախութիւն կը յայտնէ որ Օրթագիւղի թատերական խումբը, գլխաւորութեամբ Պետրոս Մաղաքեանի, Լանկայի Յունաց Ընթերցարանի մէջ ներկայացում մը տուած է, ուր Պետրոս Աղամեան սքանչելի խաղարկութեամբ կը փայլի: Հանչերեան կ'ըսէ որ ինքը իր ընկերներով ներկայ եղած է այդ ներկայացումին՝ քաջալերելու համար հայ դերասանական խումբը⁸⁷:

Թէ ի՞նչ Ընկերութիւն է «Հայկազն Երիտասարդական»ը՝ որեւէ լուսարանութիւն չի տրուիր: Չենք հանդիպած անունիս ուրիշներու քով:

15. ԲԱԺԱՆՈՐԳԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1873—1874)

«Բաժանորդական Ընկերութիւն»ը կը յիշուի 1874 Յուլիսին: Իր Գանձապետները՝ Նշան Օտեան (Գրիգոր Օտեանի եղբայրը) եւ Մ. Յ. Այվատեան, հարցումի մը պատասխանելով, կ'ըսեն թէ հրատարած են այդ պաշտօնէն 1874 Յուլիսին: Նշան Օտեան կը գրէ որ «Բաժանորդական Ընկերութիւնը իր հաստատութիւնն ու Հիմնական կանոնները ի սկզբան Ազգային Վարչութեան Գերագոյն Ժողովին ներկայացուցած, ընդունուած ու վաւերացուած» են⁸⁸:

Ն. Օտեանի այդ գրութենէն այնքան միայն կարելի է կռահել թէ Օրթագիւղի «Բաժանորդական Ընկերութիւն»ը 1873—1874 հաստատուած եւ արդէն 1874 Յուլիսին կազմալուծուած է: Զի «Ազգայիններէն ոմանք լրագրի մը միջոցաւ հրատարակաւ կը հարցնեն եղեր թէ Բաժանորդական Ընկերութեան հաշիւներն ու ժողովուած դրամները ո՞ւր են»⁸⁹:

Ընկերութեան անունը անձանօթ եղած է Թորգոմեանի եւ Ալպոյաճեանի:

16. ԸՆԹԵՐՅԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1874)

Օրթագիւղ 1874ին ունեցած է ծագումը անձանօթ «Ընթերցասիրաց Ընկերութիւն», մը, Թարգմանչաց վարժարանին նպաստելու համար, սակայն չէ կրցած լաւ կազմակերպուիլ եւ արդէն 1875ին սկիզբը կազմալուծուած է:

⁸⁷ Մասիս, 1873, Թ. 1364 Մարտ: ⁸⁸ Անդ, 1874, Թ. 1564: ⁸⁹ Անդ:

Ընկերութեան յիշատակութիւնը հետեւեալ պարագայի մէջ եղած է. Օրթագիւղի «Ուսումնասիրաց Ընկերութեան» Տնօրէն Ժողովը իր Ա. տարւոյ հաշուեցուցակը 1875 Մարտ 16ին Մասիսի մէջ հրատարակած աւտեն՝ «Ուսումնասիրաց»ի ունեցած արժեւորումներն յիշելէ վերջ, կը յիշէ նաեւ «Ընթերցասիրաց»ի արժեւորումները, գրելով. «Նրեք տոմսակներ (արժեւորում) ալ՝ որ գիւղիս ցրուեալ Դպրոցասիրաց Ընկերութեան կը վերաբերէր, եւ որ նոյնպէս Ս. Թ. (արգմանչաց) վարժարանին Եկամուտ հայրայքիու նպատակաւ ժողովուած էր, Գանձապետին կողմանէ Ընկերութեան աւանդուած ըլլալով՝ անոնց թիւերն ալ հետեւեալներն են. 1,552·305, 1,552·309, 938·851⁹⁰»:

17. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1874)

Հիմնուած է 1874ի գարնան: Ընկերութեան Տնօրէն Ժողովը 1875 Մարտ 16ին հաշուետուութեան մ'առթիւ կը գրէ Մասիսի խմբագրին. «Հաճեցէք Ձեր պատուական Մասիսի մէջ գիւղիս Ս. Թարգմանչաց վարժարանին հաստատուն Եկամուտ հայրայքիու համար կազմուած Ուսումնասիրաց Ընկերութեան Ա. տարւոյ այս հաշուեցուցակը հրատարակել ի տեղեկութիւն Պատուարժան Բաժանորդաց, կանխաւ մեր շնորհալիքը ընդունելով»:

Մուտք.

Գին 143 բաժնից	7436.— ՂՐԸ.
Երկաթուղեաց տոմսակներէն առնուած	941·05 ՂՐԸ.
Գանձապետին պահանջքը	231·75 ՂՐԸ.
	<hr/>
	8619·25 ՂՐԸ.

Ելք.

Գին Երկաթուղեաց 11 տոմսակներու եւ մէկ Պուքթէշի տոմսակի .	7623·75 ՂՐԸ.
Ծախք տնտեսաց, կրնքոց, մեխանի, տպագրութեան տոմսակաց եւն» ⁹¹	995·05 ՂՐԸ.
	<hr/>
	8619·25 ՂՐԸ.

(Շարունակելի:) Է. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

⁹⁰ Մասիս, 1875, Թ. 1661: ⁹¹ Մասիս, 1875, Թ. 1661:

DR. DIRAYR FROUNDJIAN, Armenisch-deutsches Wörterbuch. München, im Verlage K. Oltenbourg, 1952, 8°, XVI, 505 S.

Առաջին հայերէն գերմաներէն Բառագիրքն է որ ըսյս կը տեսնէ: Ճրոհնճեան յօրինած է զայն «աւելի քան 20 տարիներու» աշխատասիրութեամբ: Նկատի առած է «թէ՛ հայ եւ թէ՛ գերմանախօս ուսանողներ, ուսումնասիրողներ (Sprachwissenschaftler) եւ ճամբորդներ», որոնց առաջնորդ պիտի ըլլայ ձեռնարկս: Ան չէ բաւականացած Բառագիրքը բառերով. ներս առած է իր աշխատութեան մէջ նաեւ «բաղմաթիւ հայերէն գաւառական բառեր եւ աստիճաններ», նոյն խիստ «չափ մը նորակերտ բառեր», զորոնք մատակարարած է իրեն իր եղբայրը:

Ձեռքի տակ ունեցած է Առձեռն Բառարանը, Ս. Գարամաճեանի, Գայեանի հայերէն, Երանի հայերէն-անգլիերէն, Դաղրաշեանի հայերէն-ուսերէն, Գոնտաքճեանի, Էմիլեանի, Յովհաննէսեանի, Լուսինեանի գաղղիերէն-հայերէն, Կոյլաւի գերմաներէն-հայերէն բառագիրքները, նաեւ Աճառեանի հայերէն արմատական Բառարանը: Իրեն անմատչելի մնացած են Նարպէի, Լուսինեան-Բամաջեան հայերէն-գաղղիերէն, Մալխասեանի հայերէն, Աճառեանի եւ Ամատունիի գաւառական Բառագիրքները, չյիշելու համար ուրիշներ:

Այդ աղբիւրներէ ընտրովի հանած է 25·000 բառ եւ տուած է անոնց գերմաներէն հոմանիշները:

Այն պարագան, որ երեքպատիկ խումբերու, ուսանողներու, ճամբորդներու եւ ուսումնասիրողներու միաժամանակ զոհացում տալ ուզած է, անելի մէջ ձգած է զինքը. անոնցմէ իւրաքանչիւրն իր պահանջն ունէր. ճամբորդն՝ գրպանի բառագիրքի, ուսանողը՝ գրական բառագիրքի եւ ուսումնասիրող-լեզուարանը հին եւ նոր արմատական բառերու:

Կ'երեւայ թէ հեղինակը առաւելապէս առաջին երկու խումբերուն բաւականութիւն տալ ուզած է: Բայց փորձը ցոյց պիտի տայ, թէ անոնք զոհ պիտի մնա՞ն. յամենայն դէպս ոչ՝ լեզուարան-ուսումնականները:

Բառարանս կազմուած է առաւելապէս աշխարհարար հայերէնի համար, թէեւ չէ չեչտուած խորագրին մէջ: Այս պատճառով ալ ներկայացուած են բայերն եւ բառերը արեւմտեան հայերէնի յատուկ ձեւերով, ան-

տեսուած են դրարար հայերէնի բառագիրքէն բաղմաթիւ արմատական եւ բարդ բառեր: Եթէ առաջին կէտը կարելի է արդարացնել, նկատի առնելով Բառարանիս աշխարհարար հայերէնի հանգամանքը, բայց ոչ նկատմամբ երկրորդ կէտին, վասն զի հնարաւոր չէ մատնանշել յանուանէ գրարարի յատուկ եւ աշխարհարարի մէջ անգործածելի արմատական բառեր, անտեսելով սակաւ բացառութիւնները: Այս գանցառութեան նպատակը Բառարանին համառոտութիւնը չէ. որովհետեւ ինքնակամ մուծած է հոն «բաղմաթիւ գաւառական բառեր եւ աստիճաններ» եւ «չափ մը նորակերտ բառեր»: Բայց Բառարանի վախճանն է տալ հայ գրականութեան մէջ գործածուած բառերը ճշգրիտ իմաստներով: Եթէ գաւառական են անոնք կամ նորակերտ, տակաւին գրականութեան մէջ չկիրարկուած, ո՞վ պիտի կարօտի անոնց: Գրարար եւ աշխարհարար բառերու մէջ ճշգրիտ սահման մը դնելու համար պէտք է նախ մանրակրկիտ բառահաւաք ընել զոնէ վերջին 100 տարուան մատենագրութիւնը: Այսպիսի աշխատանք չէ կատարուած տակաւին: Ուստի հին եւ նոր հայերէններու Բառագիրքը պէտք է ունենայ իր Բառարանը համաձոյլ:

Ճրոհնճեան, ինչպէս նաեւ ամէն անոնք, որ կը ձեռնարկեն հայերէն բառագիրք յօրինելու, պէտք է նախ խնամով հաւաքէր հայերէնի բառագիրքը, զոնէ հրապարակի վրայ ծանօթ բառագիրքներէն, եւ ապա տար անոնց մեկնութիւնը պահանջուած լեզուով: Այս պատրաստութիւնը կ'երեւայ թէ չէ տեսած, ինչպէս կարելի է հետեւցնել այն պարագային որ իր Բառարանին մէջ կը պակսին բաղմաթիւ Բառարանի համար անհրաժեշտ արմատական եւ բարդ բառեր. կը յիշեմ միայն, ագանելիք, ագուցիկ, ագոսկի, ագատագրեմ, ագատադէմ, ագատակամ, ածխածին, ակադում, ակամամում, ակիշ, աղապատմեմ, աղմատ, աղմակ, աղիկամի, գտնեմ, գնիմ, մանրագնիմ, գանխուլ (ներկայացուած անխուլ), գեղջ, անգեղջ, խուզել (փնտնել), կարգաւոր (հոգեւորական), կարեմալ, կրնալ, կարկեհան, կորի, հագուստ, պատարագամատոյց, խորհրդատետր, ծիսարան, վկայաբանութիւն, մանրուսումնախազգիրք եւն եւն:

Կան բառեր, որոնք ճշգրիտ չեն ներկայացուած. անխուլ=գանխուլ. աղարտ Schmutz